ԽԱՉԵՆԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔԸ

ԱՐՏԱԿ ՂՈՒԼՅԱՆ

Խաչենի իշխանական ապարանքի ավերակները գտնվում են ներկայիս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտ, հոչակավոր Դանձասարի դիմաց՝ Խաչենագետի աջափնյա անտառապատ բլուրներից մեկի վրա[1]։ Այն մեզ է հասել խիստ ավերված վիճակում և գրեթե նույն տեսքն ուներ մոտ մեկ դար առաջ՝ Մ. Բարխուտարյանցի այցելության ժամանակ[2]։ Պահպանվել են ապարանքի պարսպի մեծ մասի հիմքերը՝ կիսակործան անկյունային բուրգերով ու դարպասով, երկու սենյակի պատերն ու ծածկի որոշ մասեր, ինչպես նաև մի քանի այլ սենյակների մնացորդներ (գծ. 1, Ա)։

Ապարանքը, որն այժմ կրում է Դարպասներ անունը, շինարարական կամ այլ արձանագրություն չունի և, որքան մեզ հայտնի է, պատմական ու վիմագրական աղբյուրներում չի հիշատակվում։ Տեղագրական երկերում այն Դարպասներ անվան տակ էլ ներկայացվում է որպես Խաչենի XIII դարի նշանավոր իշխան Հասան-Ջալալ Դոլայի ապարանք[3]։ Մինչև այսօր պատմիչ Կ. Դանձակեցու և այլոց հանրահայտ տեղեկությունները հիշյալ իշխանի նստավայր Խոխանաբերդի մասին[4] երբեմն վերագրվել են ապարանքին, իսկ վերջինիս Դարպասներ անունը համարվել է հետագայի ծնունդ և նույնացվել բերդի հետ[5]։ Պատճառը մասամբ այն է, որ ապարանքի ավերակներն ու դրանց հարավային կողմի անմատչելի ժայռաբարձունքին գտնվող Խոխանաբերդը միմյանց շատ մոտ են[6]։ Բերդը, որից չնչին մնացորդներ են պահպանվել, այժմ կրում է Թարխանաբերդ անունը[7]։

Այս առումով խիստ կարևոր են մեկ այլ ականատես պատմիչի՝ Ստ. Օրբելյանի և հետագա այլ աղբյուրների հայտնած տեղեկությունները XIII դարի Սյունյաց իշխանների ապարանքների մասին։ Ըստ այդ աղբյուրների, Հա-

---

1 *Ապարանքի չափագրությունները առաջին անգամ հրատարակել է Ն. Ծ. Պապուխյանը։ Տե՛ս նրա «Ջայլրվող ծածկերով բնակարանների դերը և տեղը Հայաստանի հին և միջնադարյան ճարտարապետության մեջ» («Հայ արվեստին նվիրված միջազգային II սիմպոզիում», հ. II, Երևան, 1981, պատկեր 105) հոդվածը։*

2 *Մ. Վ. Բարխուտարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 181։*

3 *Նույն տեղում, Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, գ. Ա, Վենետիկ, 1903, էջ 599, Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1959, էջ 374, Ստ. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը («Հայ ազգագրություն և բանահյուսություն», պրակ 12, Երևան, 1981, էջ 14)։*

4 *Կ. Դանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 269—270, 313, Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1969, էջ 317։*

5 *Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, Երևան, 1975, էջ 136, ծան. 25, Շ. Մ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, էջ 21, Նույնի՝ Մարտակերտի շրջանի պատմական հուշարձանները («Էջմիածին», 1976, Գ, էջ 49)։*

6 *Բ. Ա. Ուլուբաբյան, Դանձասար, Երևան, 1981, էջ 69։*

7 *Մ. Վ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 98—99, Հ. Ս. Էփրիկյան, նշվ. աշխ., գ. Բ, էջ 189, Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 168, «Դիվան հայ վիմագրության», պրակ V, Երևան, 1982, էջ 37, 74, Շ. Մ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, էջ 28—29։*





Գծ. 1. ա) Ապարանքի հատակագիծը, բ) Ապարանքի դարպասը (չափագրությունը և վերակազմությունը հեղինակի)

սան-Ջալալ իշխանի փեսան՝ Սյունյաց Տարսայիճ Օրբելյան իշխանը, վերադառնալով Խաչեն կատարած ճամփորդությունից, 1274 թ. Եղեգիսում կառուցել է դարբաս[8] և վախճանվել 1290 թ.՝ Արփայի դարապասում[9]։ Հայտնի է,

8 Գ. Հովսեփյան, Տարսայիճ Օրբելյանի և Մինա Խաթունի սերունդը, Անթիլիաս, 1947, էջ 2—4, պատկեր 1։ Տե՛ս նաև՝ Ստ. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, Երևան, 1976, էջ 136—140, Հ. Եղիազարյան, Աղիզրեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1955, էջ 18, 58, 61։

9 Ստ. Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 430։

որ միջնադարյան Հայաստանում դարաբաս կամ դարապաս[10] (նաև՝ դարբաս, դարպաս[11]) անվանվում էին իշխանական ապարանքները, այսինքն՝ Խաչենի ապարանքի մերօրյա Դարպասներ անվանումը նրա սկզբնական անվան փոքրինչ տարբերակված ձևն է։ Եվ քանի որ դրանով միանգամայն իմաստավորվում է Խաչենի ապարանքի վերագրումը Հասան-Ջալալ իշխանին, ապա տրամաբանական է դառնում ապարանքի կառուցման ժամանակը փնտրել հատկապես իշխանի տիրապետության (1214—1261 թթ.) այն տարիներին, երբ նա՝ ժառանգելով իշխանական աթոռը, ծավալում է այնքան բեղմնավոր մշակութային ու շինարարական գործունեություն[12], որը հետագայում պիտի պսակվեր Գանձասարի հոյակերտ եկեղեցու (1216—1238 թթ.) և ապա գավթի (հիմնադրումը՝ 1261 թ.) կառուցումով։ Եթե նկատի առնենք և այն, որ 1220—1240-ական թվականներին[13] այդ գործունեությունը պարբերաբար ընդհատվում է թաթար-մոնղոլների ասպատակություններով և ապա երկրի գրավումով, թվում է, որ ապարանքի շինարարության հավանական ժամանակը պետք է համարել 1214—1220 թթ.։

Ապարանքի շրջակայքում գտնվող բնակատեղերը, եկեղեցիները[14], գերեզմանոցը[15] և այլ հուշարձաններ[16] վկայում են, որ այն կառուցվել է անտառապատ սարալանջերին սփռված երբեմնի ընդարձակ ու բարեշեն բերդավանի կենտրոնում՝ բնակելի, եկեղեցական և այլ բնույթի շենքերով շրջապատված մի բարձունքի վրա, որի հարավային կողմում վեր է խոյացել նրա հնավանդ միջնաբերդը՝ Խոխանաբերդը։ Ապարանքում համեմատաբար լավ է պահպանվել ուղղանկյուն պարսպափակ ամբողջության գրեթե կենտրոնում գտնվող թաղածածկ դահլիճը, որը հարավ-արևելյան կողմում ունի ուղղանկյուն խորշ (գծ. 1, Ա)։ Հարավային և հյուսիսային երկայնական պատերի պահպանված մասերը սվաղված են հատակից մինչև ծածկի թաղի անցման սահմանը, որը շեշտված է պարզ տրամատի որմնագոտիով։ Մյուս երկու պատերը սվաղված են եղել ամբողջ բարձրությամբ։ Դահլիճի թաղածածկն իրականացվել է սրբատաշ որձաքարի շարվածքով, որից պահպանվել են ստորին 4—5 շարքերը։ Ծածկն ուժեղացվել է թաղակիր չորս կամարներով, որոնցից արևմտյանը հպված է լայնական պատին և կրկնաշարք է, իսկ մյուս երեքը չորս հավասար մասի են բաժանում դահլիճի երկարությունը՝ ներառյալ խորշը։ Թաղակիր կամարները կառուցվել են 2—3 շարքի բարձրություն ունեցող միակտոր քարերից, որոնք հենվում են որմնագոտին ընդհատող քառորդ գլանաձև պահունակների վրա։ Դահլիճի ծածկի նախնական ձևի վերակազմության փորձը՝ ըստ թաղի պահպանված մասերի, թույլ է տալիս ասելու, որ այն լուծվել է երկկենտրոն կամարի սկզբունքով՝ Գանձասարի եկեղեցու գմբեթակիր կամարներին նմանվող եզրաձևով։ Դա առանձնապես ակնառու է դահլիճի արևմտյան՝ լայնական պատին հպված կրկնաշարք թաղակիր կամարի եզրաձևում[17] (գծ. 2, Բ)։

---

10 «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. առաջին, Երևան, 1979, էջ 603—604։

11 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 151, Հ. Ս. Էփրիկյան, նշվ. աշխ., գ. Ա, էջ 341։

12 Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, էջ 176։

13 Նույն տեղում, էջ 188։

14 Շ. Մ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, էջ 22, Ն. Ս. Պապուխյան, Չայրվող ծածկերով բնակարանների դերը և տեղը Հայաստանի հին և միջնադարյան ճարտարապետության մեջ, պատկեր 105։

15 «Դիվան հայ վիմագրության», պրակ V, էջ 74։

16 Նկատի ունենք ապարանքից ոչ հեռու գտնվող «Ռուզանաբերդ» կոչվող (հավանաբար, Հասան-Ջալալ իշխանի Ռուզուքան դստեր անունից) հնավայրի կիսավեր եկեղեցիները, բնակատեղերը, ընդարձակ գերեզմանոցը, տարբեր շենքերի քանդակազարդ բեկորները, խոյակները և այլն։

17 Համեմ. Բ. Ա. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 128—129, տե՛ս լուսանկարները։

Հիշյալ դահլիճի և ապարանքից ոչ հեռու գտնվող նույնատիպ, բայց համեմատաբար մեծ չափերի ու փայտածածկ[18] բնակելի սենյակի հատակաձևի ու համաչափությունների ընդհանրությունից պետք է ենթադրել, որ իշխանական ապարանքի համար նախատիպ են հանդիսացել ժողովրդական բնակարանի ավանդական կառուցվածքային ձևերը, որը միջնադարյան Հայաստանի և, մասնավորապես, Արցախ-Սյունիքի պալատական ճարտարապետության





Գծ. 2. ա) Ապարանքի դահլիճի երկայնական կտրվածքը, բ) Ապարանքի դահլիճի և կից սենյակի լայնական կտրվածքը (չափագրությունը և վերակազմությունը հեղինակի)

հատկանշական կողմերից մեկն է։ Խորշաձև բաժանմունքով սենյակի այդ տիպը հետագայում չի մոռացվել և գոյատևել է ուշ միջնադարում՝ մելիքական ապարանքների հիմնական միջուկի՝ քարակերտ գլխատան կողքին։ Այդպիսի լուծման հանդիպում ենք Հորս գյուղի[19] ու Ջրաբերդի մելիքական ապարանքներում և այլուր։ Դահլիճը, լինելով իշխանական տան հիմնական

18 Ն. Ծ. Պապոյան, Ջայրվող ծածկերով բնակարանների դերը և տեղը Հայաստանի հին և միջնադարյան ճարտարապետության մեջ, էջ 334։

19 Ն. Ծ. Պապոյան, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972, էջ 75։

մասը, իր հանդիսավոր ձևերով, ըստ երևույթին, ծառայել է նաև տոնախմբությունների և պաշտոնական ընդունելությունների համար[20]։ Ուշագրավ է, որ դահլիճի պահպանված պատերին լուսամուտներ չկան։ Մ. Բարխուտարյանցը վկայում է, որ «առհասարակ սակավ են լուսամուտները և փոքր»[21]։ Հավանական է, որ դահլիճը լուսավորվել է չպահպանված հյուսիսային պատում եղած բակահայաց լուսամուտներով։

Նկ. 1. Գանձասարի վանքի պարսպի հարավային դարպասը։

Դահլիճի հարավ-արևմտյան անկյունում մուտք կա դեպի մի այլ՝ նույն ձևվով կառուցված ուղղանկյուն սենյակ, որը կից է հարավային պարսպապատին։ Ի տարբերություն դահլիճի, վերջինիս լայնական պատերի վերին մասերը ևս սրբատաշ են, իսկ արևելյան պատը մյուսների համեմատությամբ փոքր-ինչ բարակ է (0,9 մ). սա կարելի է բացատրել հարևան սենյակի գոյությամբ։ Այդ սենյակի ավելի գործնական, կենցաղային բնույթի մասին են վկայում այստեղ պահպանված տարբեր չափի ու ձևի պատրհանները, բուխարին։ Դահլիճի և այս սենյակի պատերի արտաքին մասերում ու պարսպապատերին կից երևում են ավերված պատերի որոշ հետքեր ու մնացորդներ։ Դրանց ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ դահլիճի և կից սենյակի լայնության չափով, մինչև արևելյան և արևմտյան պարսպապատերը, եղել են ևս մի քանի տարբեր չափերի սենյակներ[22], որոնք առաջինների հետ միասին բռնել են ամբողջ պարսպափակ տարածության մոտ կեսը։ Ցավոք, պահպանված մնացորդներով հնարավոր չէ հստակ պատկերացում կազմել այդ սենյակների նախնական հորինվածքի մասին։ Ենթադրելի է, որ դրանք նույնպես եղել են ներսից սվաղված և քարաշեն ծածկերով։

Ապարանքում ուշագրավ է ամբողջ համալիրի գրեթե հյուսիսային կեսը բռնող բակը։ Այն ճշտորեն կրկնում է վերոհիշյալ խորշաձև բաժանմունքով դահլիճի հատակաձևը (ավելի խոշոր չափերով՝ մոտ երկու անգամ), միայն այն տարբերությամբ, որ այստեղ խորշը գտնվում է հյուսիս-արևմտյան մասում՝ հանդիպակաց դարպասի ուղղությամբ։ Խորշի հարավային պատի շընչին մնացորդները ծածկված են փլատակներով ու հողով, որի պատճառով էլ վրիպել են ավելի վաղ չափագրողների ուշադրությունից[23]։ Մինչդեռ այդ մնացորդներով է որոշակիություն ստանում բակի խորշաձև բաժանմունքի հատակաձևը, իսկ վերջինիս առկայությամբ պատճառաբանվում արտաքին պարսպապատի ուղղանկյուն ամբողջության խախտումն այդ հատվածում։ Բակի այդօրինակ լուծումը, անկասկած, կանխորոշվել է գործնական նպատակներով։ Ամենայն հավանականությամբ այն ծառայել է բազմամարդ ծիսա-

---

20 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. I, Երևան, 1942, էջ 356. Մ. Վ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 181. հեղինակն այդպես էլ անվանում է սենյակը. «ապարանիս մեջ ավելի ուշագրավ է ընդունարանն...»։

21 Մ. Վ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 181։

22 Նույն տեղում։

23 Ն. Ծ. Պապուխյան, Ջայրվող ծածկերով բնակարանների դերը և տեղը Հայաստանի հին և միջնադարյան ճարտարապետության մեջ, պատկեր 105։

կատարությունների, տոնախմբությունների կամ դատավարությունների համար[24]. խորշաձև մասում էլ, որը, թերևս, եղել է ծածկված[25], բազմել են իշխանը և նրա մերձավորները։ Առանձնապես նշելի է, որ հորինվածքային այդ տարրը (բակի խորշաձև, ծածկված հատվածը) հետագայում ևս հարատևել է և որոշ փոփոխությամբ (երկու կողմի սենյակներով) լայն տարածում ստացել ուշ միջնադարում։ Այդպիսի բաժանմունքներ ունեն (որոնց ծածկված լինելը ակնհայտ է) Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանների, Ջրաբերդի Մելիք-Իսրայելյանների Մոխրաթաղում գտնվող ապարանքները (երկուսն էլ XVIII դար), ինչպես նաև նույն շրջանի Շուշիի որոշ հուշարձաններ[26]։

Ապարանքի պարսպի և անկյունային, բոլորաձև, սնամեջ բուրգերի պատերը շարված են անմշակ որձաքարով և ունեն 1,6—1,8 մ հաստություն։ Լավ են պահպանվել պարսպի արևելյան և հարավային հատվածները։ Բացի նշված չորս բուրգերից, որոնք միաչափ են՝ բացառությամբ հարավայինի, պարիսպի հարավ-արևմտյան հատվածում պահպանվել են նաև կիսագլանաձև, հոծ և փոքր տրամագծով մեկ այլ բուրգի մնացորդներ։ Նկատելի է այս բուրգի որոշ անհամատեղելիությունը ապարանքի հորինվածքին, որը հիմք է տալիս կարծելու, որ այն պատկանել է ապարանքի տեղում գոյություն ունեցող ավելի վաղ շինության և հետագայում ներառվել է նորակառույց համալիրի մեջ՝ պարսպի լրացուցիչ ամրության ապահովման նկատառումով։

Իր հորինվածքով ու հարդարանքով հետաքրքիր է ապարանքի միակ՝ արևելյան դարպասաձև մուտքը (գծ. 1, Բ)։ Դարպասի մուտքային բացվածքն ունի 1,6 մ լայնություն. նրա արտաքին մասի երկու կողմերի շարվածքը 0,9 մ չափով սրբատաշ է՝ ձևավորված բազմանկյուն խարիսխ ունեցող զույգ կիսաշրջան հատվածքի որմնասյուներով։ Բացվածքի երկու կողմերում՝ սրբատաշ շարվածքի եզրերից, առաջանում են քառորդ գլանի ձև ունեցող ելուստներ, որոնցից ձախակողմյանը փոքր-ինչ խոշոր է։ Ժամանակին, հավանաբար, դարպասների նման շեշտված ձևերն են պատճառ հանդիսացել, որ ապարանքները, ինչպես տեսանք, հաճախ պարզապես կոչվել են դարպաս։ Դարպասի նախնական տեսքի մասին պատկերացում կազմելուն մեծապես նպաստում է նրա պահպանված մնացորդների՝ զույգ որմնասյուների, շարվածքի տրամատավորված անկյան և այլ բեկորների համադրությունը Գանձասարի եկեղեցու ու գավթի շքամուտքերի հետ[27]. սա մեզ բերում է այն համոզման, որ մուտքային բացվածքը ծածկվել է կիսաշրջանաձև բարավորով (ինչպիսին գոյություն ուներ հիշյալ Տարսայիճ իշխանի ապարանքում)[28], իսկ զույգ որմնասյուները պսակվել են երկկենտրոն որմնակամարներով։ Քառորդ գլանաձև ելուստների վերին մասերի նախնական ձևերը ևս պատկերացնելի են դառնում, երբ այն համեմատում ենք Գանձասարի վանքի պարսպի հարավային դարպասի հետ (նկ. 1)։ Վերջինս վանքապատկան բնակարանների ու պարսպի հետ կառուցվել է համեմատաբար ուշ[29], երբ, թերևս, դեռ կանգուն էր քննարկվող ապարանքի դարպասը։ Եվ հավանական է, որ Գանձասարի Հասան-Ջալալյան կաթողիկոսները իրենց մեծ նախնու՝ Հասան-Ջալալ Դոլա իշխանի հիշատակի համար նրա ապարանքը խորհրդանշող դարպասի ձևերով կառուցել են վանքի հիմնական՝ հարավային շքամուտքը։ Չնայած այստեղ մուտքի երկու կողմի ելուստները հիմքում ուղղանկյուն են, իսկ ճակատային

---

24 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 356։

25 Նույն տեղում։

26 «Памятники архитектуры Азербайджана», т. II, Баку, 1950, таблица 165; Э. В. Авалов, Архитектура города Шуши, Баку, 1977, с. 12—13.

27 Հմմտ. Բ. Ա. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 128—129, տե՛ս լուսանկարները։

28 Գ. Հովսեփյան, Տարսայիճ Օրբելյանի և Մինա խաթունի սերունդը, էջ 3, պատկեր 1, Ս. Մնացականյան, նշվ. աշխ., լուսանկար 56։

29 Բ. Ա. Ուլուբաբյան, Գանձասար, տե՛ս № 135, 138, 140—145, 160, 163, 165 արձանագրությունները։

ձևերում նկատելի է ուշ շրջանի ճարտարապետության գրոշմը (մուտքային բացվածքի լայնազեղ կամարը և այլն), այնուամենայնիվ, այն համոզիչ պատկերացում է տալիս քառորդ գլանաձև ելուստների վերին մասի հորինվածքի մասին։ Հավանական է, որ ելուստները իրար են կապվել երկկենտրոն կամարային թաղով, դրանով իսկ լրացուցիչ ամրություն հաղորդելով պարսպապատին։

Պարանքի հորինվածքը թելադրվել է նաև ժամանակի սոցիալ-քաղաքական անհանգիստ իրադրությամբ, որն արտահայտվել է նրա սեղմ, համեստ չափերում ու պարփակ, ամրոցակերպ ձևերում։ Պաշտպանական նպատակների են ծառայել ինչպես բոլորաձև, սնամեջ (դուցե և մի քանի հարկանի) բուրգերը[30], այնպես էլ զանգվածեղ դարպասը, հզոր պարիսպը և դրան կից սենյակների տանիքները։

Պարանքի հատակագծային ու ծավալատարածական հորինվածքը միջնադարյան Հայաստանի պալատական ճարտարապետության մեջ ուրույն երևույթ է և նոր ապացույց բազմիցս նշված այն իրողության, որ պալատական ճարտարապետությունը Հայկական լեռնաշխարհում հնուց ի վեր խարսխվել է ժողովրդական ընակելի տան կառուցողական ավանդույթների վրա։ Միաժամանակ այն պալատ-ամրոցի ևս մի օրինակ է և կարևոր վկայություն՝ երկրամասի ուշ միջնադարյան նմանատիպ հուշարձանների հնամենի արմատների մասին։

КНЯЖЕСКИЙ ДВОРЕЦ ХАЧЕНА

АРТАК ГУЛЯН

Резюме

Одним из древнейших памятников дворцового зодчества исторического Арцаха является княжеский дворец Хачена, развалины которого сохранились у селения Ванк Мардакертского района Нагорно-Карабахской автономной области. Исторические и другие источники, а также архитектурно-сравнительный анализ дворца показывает, что дворец был построен строителем знаменитого Гандзасарского монастыря—князем Хасан-Джалал Дола (XIII в.). Дворец является прототипом меликских дворцов-крепостей позднейшего периода и в своем архитектурно-планировочном решении сочетает композиционные приемы народного жилища и оборонительных сооружений эпохи.

---

30 *Հմմտ.* О. Х. Халпахчьян, Строительные особенности и декоративное убранство крепостей древней Армении, Архитектурное наследство, М., 1972, № 20, с. 109—125.